

**ՀՀ Լոռու մարզպետարանը (այսուհետ՝ Մարզպետարան) հայտարարում է մրցույթ՝
Մարզպետարանի
աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոնն
զբաղեցնելու համար**

**1. ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի
առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 65-3.2-79)**

Իրականացնում է Մարզում գործող հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների (այսուհետ՝ ՀԳՄՏՍ) հետ տարվող կազմակերպական, ՀԳՄՏՍ-ի Մարզում գործունեությունն ծավալող միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ապահովման, ՀԳՄՏՍ-ի գործունեության ուսումնասիրության և առաջարկություններ ներկայացնելու աշխատանքները: Իրականացնում է Մարզի տարածքում ուստիկանության և ազգային անվտանգության, ինչպես նաև զինապարտների հաշվառման, գորակոչի, գորահավաքի և վարժական հավաքների կազմակերպման խնդիրների վերաբերյալ աշխատանքները, Մարզպետի մոտ անցկացվող խորհրդակցությունների անցկացման, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ոլորտի ՀԳՄՏՍ-ի ղեկավարների կողմից Մարզպետի համապատասխան հանձնարարականների ու կարգադրությունների կատարման ընթացքի ուսումնասիրման աշխատանքները: Իրականացնում է Մարզի տարածքում հարկային մարմինների գործունեության, կապի, էլեկտրամատակարարման, ջրահեռացման և գազամատակարարման ոլորտում ծագած խնդիրների լուծման առնչությամբ համապատասխան ՀԳՄՏՍ-ի ղեկավարներից սահմանված կարգով ստացված տեղեկատվության մշակման և վերլուծման աշխատանքները: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

* բարձրագույն կրթություն,

* քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ: Մրցույթը կանցկացվի 24.03.2017թ.՝ ժամը 1100-ին, Մարզպետարանի շենքում (ք. Վանաձոր, Հայքի հրապարակ):

Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ

փաստաթղթերը՝

* դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

* տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ,

* արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ, կամ համապատասխան տեղեկանք,

* մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի,

* անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցութին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

ՀՀ քաղաքացիները մրցութին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 900-ից մինչև 1200-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 09.03.2017թ.:

Մրցութին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմ (ք. Վանաձոր, Հայքի հրապարակ, հեռ. 2-10-24):